# Հայտարարություն

ՀՀ Շիրակի մարզի, Աշոցք համայնքի, Ղազանչի բնակավայրի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ՝ հասարակագիտության /10 դասաժամ/, պատմության /2 դասաժամ/ ,իմ հայրենիք և աշխարհ առարկայի /3 դասաժամ/ և ռուսաց լեզվի / 25 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

**Ուսուցչի թափուր աշխատատեղի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

**1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,**

**2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),**

**3.Անձը հաստատող փաստաթուղթ,**

**4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),**

**5.Ինքնակենսագրություն (Ձև 5),**

**6.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,**

**7.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,**

**8.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),**

**9.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,**

**10.Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն/ մասնակցած լինելու դեպքում/:**

**11.Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից։**

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակը համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից։

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 7-ին՝ ժամը 13:00-ին /պատմություն. հասարակագիտություն, / և հոկտեմբերի 8-ին 13:00-ին /ռուսաց լեզու/, ՀՀ Շիրակի մարզի

«Ղազանչիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Աշոցք համայնք, Ղազանչի բնակավայր, 8-րդ փողոց, շ.12։

Տեղեկությունների համար զանգահարել /093521699 / հեռախոսահամարով։